առաջնութեան, այլ 'ի միասին լեալ է մուտն մեր 'ի Գերեզմանն յաւուր յայնմիկ, և ոչ ունիմք հակառակութիւն ինչ ընդ Հայս, և ըստ այսմ բանից ազդ արասցեն 'ի Դուռն, իսկ դատաւորն ընթերցաւ զգիրս Հայոց, եւ ստուգեաց զիրսն յայլազգի դռնապանաց, և ըստ այնմ 'գրեալ յայտ արար 'ի Դուռն։ Ի հասանիլ այսոցիկ գրեանց 'ի թագաւորեալ քաղաքն, տուաւ նոր հրովարտակ Հայոց, վարիլ ըստ նախնի սովորութեան և ջնջեցաւ հրովարտակն Ծուննաց՝ զոր հանեալ էին 'ի ծածուկ։ (1720)։

Ի լրանալ այսր դատաստանի, եկ առաջի այլ խմն խընդիր սրտամաշ։ զի ոմն 'ի բնակչաց Սիոնի Ֆաղլալլահ անուն, ամբաստան լեալ զՀաննա վարդապետէն աւ դատաւորն եւ ասէ։ Զիթենեաց պարտէզն՝ Գերեզմանատունն՝ և տեղին Ս։ Փրկչի վանաց, են 'ի կալուածոց մերոց, որպէս յայտ առնէ կալուածական տումարն, և միաբանք Հայոց յանիրաւի յափշտակեալ են զայնս, այժմ խնդրեմք պատուիրել նոցա, զի ամիսոփեսցեն զՀեաս իւրեանց 'ի տեղեացն այնոցիկ՝ և յանձնել մեզ։ Կոչեաց դատաւորն զՀաննա և զԱբրահամ վարդապետս և զԱբրահամ Թարգմանն, և եհարց ցնոսա, և նոքա ասեն, բաղում անգամ յարուցեալ են վէճս ազգականք առնս այսորիկ, վասն տեղեացս զորս յանիրաւի պահանջեն, և չ'չահեալ ինչ դարձեալ են յետս իբր ամօթապարտ, զի տեղիքն այնոքիկ սեփհական ժառանգութիւն են Հայոց 'ի սկզբանէ և այսր։ զի 'ի տիրել Արքային Սէլիմայ աշխարհին Պաղեստինոյ և կողմանցս այսոցիկ՝ հաստատեալ է զայնոսիկ տեղիս լինել սեփհական ազգին Հայոց։ Եւ ետ ընթեռնուլ դատաւորն զրովանդակ գրեանս զոր մատոյց Հաննա վարդապետ առաջի Ֆաղլալլահի, և ծանոյց զլսեստս նոցա և զընդունայն դատաստանս առաջին վերատեսչաց, որք ոչ ինչ չահեցան և նոքա 'ի ժամանակին յայնմիկ։ Եւ լինել այսպէս և 'ի խափանիլ հակառակութեան նորին, մինչ 'ի ներքս և ազգականք առնն, և վկայեցին առաջի դատաւորին, թէ ոչ Ֆաղլալլահ և ոչ լինքեանք ունին իրաւունս տեղեացն այնոցիկ, զի նոքա են 'ի ձեռս Հայոց (1720)։

Իսկ Հաննա վարդապետ խնդրեաց 'ի դատաւորէն՝ զայս ամենայն գրով յայտ առնել 'ի Դուռն և խնդրել հրովար-